

իմոց, այլ իբրեւ զոչխարս մորորեալս եւ կամ թռչուն մի որ ի բունոյն ոստնու եւ յերամէ հեռանայ, ոչ եւս գտնու զընկերան. այսպէս եւ ես ոչ գտի տեղ խաղաղ, ուր զիցեմ զգլուխ իմ. այլ եւս անկայ ի ձեռս անօրինաց, որպէս ձագ յորոգայթս սրսողաց եւ յետ բազում չարչարանաց եւ դառն կտտանաց՝ մօրէ մերկ եղեալ՝ հազիւ մազապուրծ լինալ զերծայ ի ձեռաց նոցա ողորմութեամբն Աստուծոյ, որպէս եթէ ի ժանեաց առիւծոց: Եւ ով կարէ պատմել կամ ընդ գրով արկանել զանհանդուրժելի նեղութիւն ժամանակին, որոց եւ լուրն պակուցանէ զլսողան. ուր եւ բազումք, մանաւանդ բնաւն անդակիցք իմ եւ ազգայինք, ի պէսպէս մահս եւ ի գերութիւնս մատնեցան, մեծ թշուառութեամբ արտաքս քարչեալք ի մայրենի գրկաց, ի պանծալի գաւառէն Սասնոյ, վասն ըստ մեղաց մերոց եւ բազմաթշուառ բերմանց ժամանակիս, որ աշխատութեամբ ընուեալք՝ ուստեք օգնութիւն ոչ ունելով, որպէս արժանն էր ի թաղաւորաց եւ յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոց. այլ միայն յԱստուած յուսացաք ըստ խրատու մարգարէին, որ ասէ թէ Ընկեա ի Տէր զհոգս քո. եւ զարձեալ թէ ո յուսայ ի Տէր որպէս ի լեռն Սիոնի. յորոյ օգնութեամբ եւ տուչութեամբն եկի ի Կոստանդնուպոլիս եւ ետու գրել ըստ իմում կամաց եւ ախորժանաց զայս տենչալի Կանոնագիրս լիակատար:

Յաղազս որոյ յոտս անկեալ սրբոցը եւ իմաստնոցը, պատահելոցը սուրբ մատենիս եւ աստուածատուր բուրաստանիս եւ օգտելոցը իսկ ի խոչոր աշխատութենէ աստի իմմէ, սրտի մտօք արժանի առնէք յիշման ի մաքուր աղօթս ձեր զծնողան իմ բարեբարոյ՝ զհայրն իմ Մելիքսեթ եւ զմայրն իմ զՆսէֆ, զեղբարան իմ զՍահակ եւ զՆատարն եւ զքոյրն իմ Ծահկուն, Մուղալն եւ զՀեռիփսիմէ եւ զհօրեղբարան իմ զտէր Ներսէս եւ զԿարապետն եւ զամենայն երախտաւորս:

Արդ ի սոյն բազմալրով ժամանակիս կատարեցաւ զիրքս այս ձեռամբ ումեմն Լեհցի Սիմէոնի նօտարի:

Եւ զի այս վերոյիշեալ վրէժխնդրութիւնս ի Տեառնէ է յազազս պէսպէս չար զնացիցն մերոց, քանզի մեղաք յամենայն գործս մեր եւ անօրինեցաք ըստ ամենայն զնացից մերոց, եւ առ հասարակ ամենեքեան խոտորեցաք, յանցեաք եւ ապատամբեցաք եւ անպիտանացաք ըստ մարգարէին. մանաւանդ որք

դաստիճանս ունին զառաջնորդականս, օտարացան միանգամայն ի ճշմարտութենէ եւ եղեալ ծառայք չար տէրանց, մամոնայի ասեմ եւ այլոցն. որ նմին հետեւին եւ լուցին լիզուք նոցա ի խրատուէ եւ յանդիմանութենէ եւ գրեթէ ամենայն բարի հետեւումք լուցին յամենեցունց, սիրելով զչարն եւ առնելով զվատթարն, որ չէ հաճոյ Աստուծոյ:

Որով տացէ մեզ Քրիստոս Աստուած զիտել զնա եւ զնալ ի ճանապարհս նորա եւ առնել զկամս, զի մի ի սպառ կորիցուք եւ ի դժոխս ներքինս մտցուք՝ տանջիլ ընդ դեան ի հուրն յաւիտենից. որմէ փրկէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Կը յաջորդէ Ազարիայի պատմական ոտանաւորը, զոր տե՛ս վարը:

Այս Կանոնադրէն ապա օրինակ մը հանած է Յակոբ Եպիսկոպոս Կուտինացի, 1611ին ի ձեռն Արսլան գրչի, ի Կ. Պոլիս: Յիշատակարանին մէջ կ'ըսուի.

«Տեսի անդ կանոնս, կատարեալ զիրս Կանոնաց, զոր հաւաքեալ էր զԿանոնս Առաքելոց, Վարդապետաց, Հայրապետաց սրբոց սուրբ վարդապետն Գէորգ Կիլիկեցին, որ է Սոցի. եւ անտի առեալ էր զօրինակն երիցս երանեալ քաջ բարունապետն մեր տէր Գրիգոր վարդապետն: Եւ ի նմանէ առեալ էր զօրինակն աշակերտն նորա տէր Ազարիա Սասնեցի. զի նա բազում ջանիւ խնդրեալ էր բազում տեղիք ժողովոց ի մի վայր. ի վերայ այն կանոնացն առաւել աւելեաց բազում կանոնս ի բազում օրինակաց այնպէս փարթամ եւ հարուստ, որ ոչ գտանէր ազգիս մերում ի մի տուփ ժողովեալ:

Ձեռ. Կուտինայի. Հմմտ. Մ. Վ. Ազաւնունի, Բիւզանդիոն, 1897, Թ. 214: Յիշատակարանիս օրինակը ուղարկած է ինձ Բարդէն Եպիսկոպոս Կիլիկեցեան:

Հայ Կանոնագրքի պատմութեան համար կարեւոր են Յակոբ Եպիսկոպոսի այս տուգրքը: Ասկէ կը տեսնուի թէ Ազարիայի Կանոնագրոց հիմ ծառայած է՝

1. Գէորգ Լամբրոնացոյ օրինակը, որ հաւանօրէն նոյն էր յէականս Վիեննայի Թ. 810 ձեռագրին հետ:

2. Գրիգոր Կեսարացի զայն ճոխացուցած է նոր յաւելումներով, կամ ինչպէս Ազարիա կը վկայէ «նա ի բազում գրեանց եւ ի բազում տեղեաց ժողովեալ էր ի մի» այլ եւ

այլ հասուածներ եւ զանոնք մուծած Գէորգ Լամբրոնացոյ օրինակին մէջ: Թէ յորո՞ւմ կը կայանային Կեսարացոյ օրինակին առաւելութիւնները, այս մասին ակնարկութիւն չ'ըներ Ազարիա: Ինձ կը թուի թէ Կեսարացոյ յաւելումներն են Բ. 41—44, 49, 57, 62—70 եւ 71—72 յօդուածները, ինչպէս նաեւ Ա. 1—2, այն է Միսիթար Գոշի Դատաստանագիրքն եւ Ասորա—Հոռվմէական Օրինագիրքը իր յաւելումոց մասերով. իրենն է նաեւ կանոններու ժամանակագրական դասաւորութիւնը: Կեսարացոյ այս խմբագրութիւնը, որ Կանոնագրոց Բ. խումբը կը կազմէ, ԺԷ. եւ ԺԸ. զարերուն յաճախաթիւ օրինակներով բազմացուցաւ: Այս խումբին կը վերաբերին ի մէջ այլոց՝ Վիեննայի Թ. 256, 579 եւ 581 կանոնագիրքները:

3. Ազարիա Սասնեցի կ'օրինակէ Կեսարացոյ խմբագրութիւնն «եւ ես ջանացի, կ'ըսէ, այլ եւս յաւելու եւ հարստացուցանել, զի մի ինչ պակաս գտցի»: Ազարիա իր յաւելումներն ամփոփած է Ձեռագրին Գ. լուծարմէ մէջ. այսպէս ենթադրել կու տան իր խօսքերը. «Եւ ժողովեցի բազում բանս եւ յանագան կանոնս եւ առանձնական եւ հասարակ ժողովոց՝ ի մերոց եւ օտարաստանացանց բազում աշխատութեամբ»: Ակնարկուած «օտարաստան ազանց» կանոններն են առանց տարակուսի Ս. Օգոստինոսի կանոնք (Գ. 7—8):

Ազարիայի Կանոնագիրքը տարածում չգտաւ. որչափ ինձ ծանօթ է՝ անկէ օրինակ մը միայն հանուած է, եւ այն Յակոբ Կուտինացի Եպիսկոպոսի համար, ինչպէս յիշեցինք վերադոյն:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԱԶԱՐԻԱՅԻ ՍԱՍՆԵՑԻՈՅ

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՀԱՐՈՒԱՅՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԱՒԱՌԱՅՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՅ Ի ՁԵՌԱՅ ԶԵԼԱԵԱՆՅ

Արդ Հայկազնեան մեծ տօմարի հազար յիսուն ութերորդի Արքայութեան Տաճկաց ազգի ԺԳ. ամն սուլթան Ահմատի ի ժամանակըն վերջացեալ, երկիրս անթիւ չարեօք լըցեալ, Տէրունականն բան կատարեալ, զոր կանխագոյն մեզ ծանուցեալ:

Ազգ ի վերայ ազգի չարժեալ, միմեանց երկրի աւեր անեալ: 10
Եւ թագաւորք յոյժ չարացեալ, միմեանց երգմանց դաշըն սրտեալ: Դատք՝ Ե իրաւունք նոցմէ բարձեալ, ի դատաստանս կաշոս առեալ: 15
Չանպարտ զարդարան եղեն խոտեալ, եւ զըստահական յառաջ անեալ: Եւ փաշայից սանձախ տըւեալ, յորմէ խընդամբ եղեն զնացեալ: Եւ յետ սակաւ աւուրց անցեալ, կըրկին զայն տեղն այլոց տըւեալ: 20
Եւ նա զընացեալ զնա հալածեալ, եւ ի թախտէն ըզնա հանեալ: Իսկ նա եղեւ յոյժ տատանեալ, յամենեցունց անարդ թըւեալ: 25
Վասն այն եղեւ ապըստամբեալ, յիւրմէ մեծէն զըլուխ քարչեալ: Չգորս բազումս առ ինքն կուտեալ, եւ անձնիշխան զինքն արարեալ: Եւ զայն համբաւ արքայն լըւեալ, զօրըս բազումս առ նա յըլեալ: 30
Իսկ նա զամէնքն կոտորեալ, եւ յարքայէն ոչ երկուցեալ: Այլ եւ յաճախ նա զօրացեալ, եւ իւր հեծեալսն զօրացուցեալ: 35
Չաւար պարգեւս նոցա տըւեալ, եւ զմեծութեան փառս խոտացեալ: Վասն այն եղեն յոյժ զօրացեալ, որ ձէլալիք են անուանեալ: Չգիւղ եւ զքաղաքըս աւերեալ, զարս եւ զկանայս գերի առեալ: 40
Չորրս եւ զայրիս ոչ խընայեալ, զհարուստ, զաղքատ սրոյ անցուցեալ, Չձեր եւ զտղայ ոչ ողորմեալ, զիւրեանց զըրաստ եւ զինչս առեալ: 45
Եւ որք այսպէս անողորմ լեալ, անագորոյն սիրտ քարացեալ: Նոցա մեծին պատիւ տըւեալ, հաղարապետ զնոսա կարգեալ: Նաեւ զիւան մեծ արարեալ, ամենեցուն պատուէր տըւեալ: 50
Եղբար'րք, պա'րտ է մեղ քաջանալ, մինչեւ ի մահ պատերազմեալ: Յայնժամ զօրացն ի մի եկեալ, առ իւր իշխան զայս ասացեալ: Մի' երկընչիք զըլուխ մեր լեալ, մեր քո ծառայք հընազանդեալ: 55

Խորագիր չունի Ձեռագիրը: 20 տուեալ: — 24 թուեալ: — 29 լուեալ: — 47 տուեալ: — 50 տուեալ:

Չոր ինչ կամիս, եմք պատրաստեալ,
 Երթալ ի կուլուս պատերազմ տալ.
 Թէեւ ի մէնջ մին մընացեալ,
 60 զքեզ ի ձեռաց ոչ եմք թողեալ:
 Այսպէս իշխանն հաստատեալ,
 ըզգորս բազումքս ժողովեալ.
 Հազարապետ նոցա եղեալ,
 որ Եազըճի էր յորջորջեալ.
 65 Ի Սեւերակն եղեւ սընեալ,
 այլ եւ անդէն զինաւորեալ:
 Սա ձեւալոց սկիզբն եղեալ,
 եւ աշխարհի աւեր ամեալ:
 Անտի յառաջ յԱւրֆա դիմեալ,
 70 քառասուն հազար զորօք հեծեալ.
 Եւ ըզքաղաքն պաշարեալ,
 ամիսս երկու շըրջապատեալ:
 Եւ յետ աւուրց ի նա մըտեալ,
 եւ ըզդրդեակն անդէն առեալ:
 75 Ձիւր մեծամեծսն զըլխատեալ,
 եւ ի նոցա տեղն նըստեալ:
 Եւ ըզքաղաքն աւար առեալ,
 զամենեսեանն կողոպտեալ:
 Նաեւ զորացն իւր ջըրուեալ,
 80 զերկրան ամէն շուրջ տարածեալ.
 Չամենեսեան զո՛ր եւ զըտեալ,
 ի չարչարանս, ի մահ մատնեալ:
 Չբոլոր գերկիրն աւերեալ,
 բնաջինջ զամէնն արարեալ:
 85 Ձինչ թագաւորն ծանուցեալ,
 յորմէ եղեւ յոյժ բարկացեալ.
 Յայնժամ զվազիրն մեծ հանեալ,
 Հասան փաշայ էր անուանեալ:
 Անթիւ զորօք յուղաւորեալ,
 90 մինչեւ յԱմիթ փութով հասեալ.
 Չորսոյով անդ արարեալ,
 բազում իշխանս վերաբերեալ:
 Նաեւ զորացն թիւ ամեալ,
 երկու հարիւր հազար եղեալ:
 95 Մեծամեծ թօփ յԱմիթայ հանեալ,
 հարիւր գոմէշ ի նա լծեալ:
 Ելեալ ի դէպ յԱւրֆա դիմեալ,
 եւ զԵազըճին ձեռքաւարեալ.
 Թօփով զերեղերն ի փուլ առեալ,
 100 եւ ըզպարիսպն քայքայեալ:
 Պատերազմունս բազումս տըւեալ,
 յերկու կողմանց զիմամարտեալ.
 Բայց ձէլալուն վընաս չեղեալ,
 ոչ ի բերդէն ի դուրս հանեալ:

95 Համթայ: — 97 յԱւրֆայ:

Սարտարն եղեւ ի յետ դարձեալ,
 105 եւ ի յԱմիթ ձմեռնացեալ:
 Եւ Եազըճին անդէն կացեալ,
 եւ ուր պիտէր՝ անդ աւերեալ:
 Սարտարն յԱմիթայ ըզտունն հանեալ,
 110 զկին եւ զխաղնայ եւ զինչ որ լեալ,
 Ի քաղաքն Թոխաղ յղեալ,
 եւ ինքն դարձեալ զորս ժողովեալ:
 Եւ Եազըճին գարունն ելեալ,
 եւ ի Սեւաստ զիմաւորեալ.
 115 Եւ ըզքաղաքն կոխեալ առեալ,
 բազում աւարնս ժողովեալ.
 Չբոլոր երկիրն գերեցուցեալ
 զինչս եւ զպարանս յափըշտակեալ:
 Վասն այն սաստիկ մեծ սով եղեալ,
 եւ հաց ուրեք չեղեւ զըտեալ.
 120 Ձի լիտր մի հաց տասն ոսկի լեալ,
 եւ զայն ոչ ոք եղեւ զըտեալ.
 Քանզի արտերն ամէն այրեալ,
 եւ զհասկ նոցա հետ իւր տարեալ:
 125 Յետոյ Սարտարն յԱմիթայ ելեալ,
 եւ Եազըճուն վերայ դիմեալ.
 Այլատանու զաշտն հասեալ,
 անդէն զբանակն հաստատեալ:
 Եւ Եազըճին անդէն հասեալ,
 130 զէ՛մ յանդիման ճակատ եղեալ:
 Պատերազմի պատրաստ եղեալ,
 եւ ի յիւրեարս մարտուցեալ:
 Եւ Եազըճին փախուստ առեալ,
 զէպ ի ձանիկ զիմաւորեալ:
 135 Եւ Սարտարին անդէն ելեալ,
 եւ ի Թոխաթ ձմեռնացեալ:
 Չորսոյըլուս մի մեծ հանեալ,
 եւ Եազըճուն վերայ յըղեալ.
 Իսկ Եազըճին ըզնա կալեալ,
 140 եւ զորսն ամէնն կոտորեալ:
 Չորսոյըլուս որ էր կալեալ,
 Օսման փաշայ էր անուանեալ.
 Չնա պարզեւօք եղեւ թողեալ,
 145 թէ ես ձեռն չեմ երկուցեալ:
 Բայց յետ երկուց ամսոց անցեալ,
 պիղծ Եազըճին այն սատակեալ:
 Ունէր եղբայր մի չար յոյժ լեալ,
 որ Հասան պէկ էր կոչեցեալ.
 150 Նա ի տեղին նորա նըստեալ,
 որում ամէն զորքն հաւանեալ:
 Իսկ Սարտարին տունն որ ելեալ,
 եւ ի Թոխաթ զիմաւորեալ,

116 բազումս: — 117 գերեցեալ: — 149 ի տեղն:

Հասան պէկին զայն իմացեալ,
 յոյժ խնդալով զառաջն առեալ.
 155 Ձկին եւ զխաղնան ձեռքաւարեալ,
 եւ զորս ամէնն կոտորեալ.
 Չանթիւ բարիսն աւար առեալ,
 եւ յայնմանէ փարթամացեալ:
 160 Ձի տասն հազար ջորի բարձեալ,
 անթիւ զըրաստ եւ ուղտ լըծեալ.
 Ակն եւ ջուհար անդին եղեալ,
 որ չէ ոք մարդ այնպէս տեսեալ:
 Եւ զանազան շինուածս զուգեալ,
 165 արքայութիւն զըժողք կազմեալ.
 Յըստակ ոսկուց պատկերս հանեալ,
 զըստը ահամը ընդելուղեալ:
 Իսկ ձէլալոցն զայն տեսեալ,
 ուրախութեամբ զըւարձացեալ.
 170 Բազում մասունքս կոտորատեալ,
 եւ յիւրեանց մէջն բաժանեալ:
 Ձկինն բազում աւուրս պահեալ,
 պըղծեալ ըզնա եւ անարգեալ.
 Ամօթալի յետ դարձուցեալ,
 զի այր նորա այնու խոցեալ:
 175 Եւ նա այնպէս խոցտառակեալ,
 առ այրն իւր Թոխաթ հասեալ:
 Հասան փաշայն իրբեւ տեսեալ,
 երեսին գոյնն այլափոխեալ:
 180 Իսկ Հասան պէկն գարունն ելեալ,
 Հասան փաշին վըրայ եկեալ.
 Ոչ թէ բազում զորօք զիմեալ,
 միայն հազար արամբ գնացեալ:
 Յորժամ եղեւ Թոխաթ մերձեալ,
 եւ մեծ Սէրտարն զայն լըւեալ,
 185 Անթիւ զորս նա ժողովեալ,
 յիսուն հազար արքս կազմեալ:
 Իսկ Հասան պէկն կեղծաւորեալ,
 եւ ըզՍէրտարն նենդիւ խաբեալ.
 Թէ ես չեկի պատերազմել,
 190 կամիմ հետ քեզ միարանել:
 Եւ նա ի բան նորա պատրեալ,
 եղեւ անհոգ ուրախացեալ:
 Չհեծեալ այսր անդըր թողեալ,
 ըզՀասան պէկն ի միտ չածեալ:
 195 Յանկարծակի փողն գոչեալ,
 զորք ձէլալուն պատրաստ զըտեալ.
 Փուլք ի փուլաց ի ներս մըտեալ,
 ըզմեծ Սէրտարն փախուցեալ:
 200 Ըստ Սաղմոսին բանն լըցեալ,
 թէ մին զհագարբն հալածեալ:
 Չոր Հասան պէկն ըզհետ մըտեալ,
 Հասան փաշան բերդն մըտեալ:

Իսկ ձէլալաց զորս զըտեալ,
 զամենեսեան ընդ սուր անցեալ:
 205 Չտուն եւ զտեղ քաղքին առեալ,
 զինչս եւ զբարիսն ժողովեալ:
 Յաւուր միում Փաշայն ելեալ,
 ընդ պատուհանն նայեցեալ.
 Իսկ թըշնամեաց ըզնա տեսեալ,
 հարեալ ըզնոյն եւ սատակեալ:
 210 Եւ Հասան պէկն զայն իմացեալ,
 զամէն քաղաքն ի հուր այրեալ.
 Չմարդիկ նորա բընա ջընջեալ,
 երիս ամիսս աւեր ամեալ:
 215 Ի յԱմասիա անտի դիմեալ,
 զըստը քաղաք շըրջապատեալ,
 Վաթսուն հազար ոսկի առեալ,
 ապա զնոցայն զանց արարեալ:
 Եւ Թոխաթու չարիքն որ լեալ,
 220 այլ եւ զայլոցն որ է գործեալ.
 Ոչ թէ այս է որ եմ զըրեալ,
 զի հազարէն մին չեմ յիշեալ:
 Եւ Հասան պէկն անտի ելեալ,
 եւ յըստամպոլ զիմաւորեալ.
 225 Եւ յինչ երկիր որ պատահեալ,
 քար վըրայ քարի չեղեւ թողեալ:
 Ձինչ ի Պուսայ եղեւ հասեալ,
 թագաւորին հնազանդեալ:
 Եւ նա սիրով գնա ընկալեալ,
 230 զճըմըշտու սանձախն տուեալ:
 Եւ յետ երկու տարու անցեալ,
 թագաւորին գնա ըսպանեալ.
 Եւ զորք նորա ամէն ջըրուեալ,
 յայս կոյս ծովուն եղեն անցեալ:
 235
 ի Հայաստան երկիրս լըցեալ:
 Իսկ մեծամեծքն սոցա լեալ,
 հարիւրապետ ինքեանց կարգեալ.
 Տասըն մասունքս բաժանեալ,
 240 որ եւ յատուկ անուանս կոչեալ:
 Նախ առաջին թաւունն եղեալ,
 որ գեազըճին եղեւ անցեալ.
 Այնչափ չարիք նա արարեալ,
 որ ընդ զըրով չկարեմ ձեզ տալ:
 245 Ապա Ղարանտար Օղլին լեալ,
 յԱնկիւրիոյ եղեւ ելեալ.
 Նա շատ չարիք երկրի ամեալ,
 բազում գաւառս շըրջապատեալ.
 Ապա ընդ Պարսս միարանեալ,
 250 զազըն Տաճկաց սըրոյ տըւեալ:

215 ի (յԱմասիա) չիֆ: — 226 վերայ:

Մինչեւ ցայսօր է նա մնացեալ,
բազումք յահէ նորա սարսեալ:
Զինի նորա խարախաչն լեալ,
եւ սա բազում չարիս գործեալ:
255 Ի Մերոյնէ յԱմիթ եկեալ,
Նասըր փաշայն զնա ըսպանեալ:
Ապա Շապանըն պիղծ ելեալ,
յուրով զոգիս նա խողխողեալ:
Ապա յԱմիթայ եղեւ հալածեալ,
260 եւ ի Սարբերդ կործան անկեալ:
Հինգերորդին էր Զիւլիֆղար,
անթիւ գորօք էր նա լըցեալ:
Եւ մինչ զերկիրն աւեր ածեալ,
ի Սարտարէ մի ըսպանեալ:
265 Վեցերորդին Փիլի կոչեալ,
արիւնարբու շուն երեւեալ:
ԶՂայսար քաղաք նա՛ աւերեալ,
բայց ուրանօր նա՛ սատակեալ:
Եօթներորդն էր Եօլա-սըղմազ,
270 խիստ անողորմ զինչ զՅուզաս:
Եւ սա նեղեաց զբրիտանեայս,
բայց կորեաւ զինչ զՀերովդիաս:
Ութերորդին Շէյթան-չաքուջ,
որ շատ արար գուրում եւ կուճ:
275 Սա աւերեաց քաղաք եւ պուրճ,
յետոյ ըսպանաւ ի յառիւծուց:
Իններորդն էր Եօլա-կիրմազ,
զինչ շար արար քան ըգրեւզաս:
Զբազմաց արիւնս վաթեց զինչ սազ,
280 ապա կորեաւ ի նոյն յորսայս:
Ապա Քափանաք-օղլին լեալ,
որ թուրքմանէն յառաջ եկեալ:
Զկեղու երկիրն նա աւերեալ,
ապա գնորայն գըլուխն հատեալ:
285 Եւ արտաքոյ քան զսոսա լեալ,
վեց ճէլալիք այլ եւս յայտնեալ:
Նախ առաջին էր Ապուսէֆ,
որ զԽնուս քանդեց սոսանց նըսէֆ:
Այնքան սա խեղճ բաներ արաւ,
290 մինչ զի ճակատն եղլիւր բուսաւ:
Եւ յԱրզըրում նա սատակեալ,
զի յԱստուծոյ էր ատեցեալ:
Պիղծ անիծած մարմինն առեալ,
ի կոտորուն մէջըն ճրգեալ:
295 Բայց նա ի շան կերպըն մըտեալ,
եւ ի կուէն ի դուրս վագեալ:
Ի տունս բազումս նա գընացեալ,
բազում վընաս եւ չար գործեալ:

251 մինչեւ զՄծրին:

Քանզի յոգունց նա երեւեալ,
որոց տեսեալ եւ հիացեալ:
300 Ի գիշերի մենաչըջեալ,
զոր ի բազմաց եղեւ կալեալ:
Տարեալ ի սիւն ըզնա կապեալ,
այգուն տեսին դարձեալ մեռեալ:
305 Ամէն գիշեր նա շուն եղեալ,
եւ ի տըներն ի շուրջ եկեալ:
Երբ առաւօտըն լուսացեալ,
նա ի կօն անյայտ եղեալ:
Եւ երկրորդին Իպրիմ պէկ լեալ,
310 որ ի Ղուլիայ էր նա ելեալ:
Երեք հազար զարըս կալեալ,
եւ դամբս վեց զՄուշ աւերեալ:
Եւ զայլ երկիրս ասպատակեալ,
ի տատանման զնոսս պահեալ:
315 Ազգի ազգի չարիս ածեալ,
զինչըս նոցա յախըշտակեալ:
Զբընակիչըն փախուցեալ,
զապրանք վանացն առ ինքն առեալ:
Ի շխան տեղւոյն որ էր տիրեալ,
320 Շարուֆ անուն էր կոչեցեալ:
Երեք անգամ հեծեալ բերեալ,
եւ ընդ նմա պատերազմեալ:
Եւ ոչ երբեք զնա փախուցեալ,
այլ նա զիշխանն յաղթահարեալ:
325 Եւ յայլ երկիր եղեւ զնացեալ,
մինչ զերեւան թալան առեալ:
Եւ յաղթութեամբ անտի դարձեալ,
ի Մըշու գաշտն եկեալ նըստեալ:
Զարս անողորմս ի վանս յղեալ,
330 եւ գառաջնորդն առ նա բերեալ:
Հինգ հազար մոմ նորմէ խնդրեալ,
մեծամեծ ու գեղեցիկ լեալ:
Իսկ նա կարող էր զայնըս տալ,
վասն այն սաստիկ զնա չարչարեալ:
335 Եւ նա անկեալ երեսս ի վայր,
զսուրբ Կարապետն յիշէր եւ լայր:
Սուրբ Կարապետ փութով հասեալ,
պաղատանաց նորա լըեալ:
Նոյն գիշերին հըրաշս ցուցեալ,
340 շանսատակ այն պիղծըն եղեալ:
Առաւօտուն երբ լուսացեալ,
տեսին զԻպրիմըն գըլխատեալ:
Յայնժամ զօրքն յոյժ երկուցեալ,
եւ գառաջնորդն ի բաց թողեալ:
345 Յորժամ եղեւ չարըն բարձեալ,
երկիրն ամէն ուրախացեալ:
Եւ զօրքըն իւր եղեն ցըրուեալ,
յիւրաքանչիւր տեղիս երթեալ:

Եւ երրորդին Միւր Մահմատ լեալ,
350 ի Մերսինայ էր նա ելեալ:
Որ եւ զՄերտին եւ ըզՄըծբին,
մինչեւ յԱմիթ նա աւերեալ:
Յետոյ եւ զնա են ըմբըռնեալ,
յԱմիթ քաղաքն ըզնա բերեալ:
355 Զմորթն յիւրմէ իբր գտիկ հանեալ,
եւ զպիղծ մարմինն հըրով այրեալ:
Եւ չորրորդն Քօսս Սաֆար:
ի յԱնթափու եղեւ ելեալ,
Քըսան հազար զօրըս կազմեալ,
360 եւ դամբս եօթն գերկիրս գերեալ:
Ի յԱնթափու մինչ Սըղըրում,
անթիւ բազում արար գուրում:
Յետոյ եղեւ հընազանդեալ,
զԱրզըրումու սանձախն առեալ:
365 Յորժամ ձըղալ-օղլին եկեալ,
եւ ընդ Շահին պատերազմեալ,
Սա ընդ նմա եղեւ զնացեալ,
Պարսից զօրացըն սատակեալ:
Զօրըս անթիւ նա կոտորեալ,
370 եւ այլք զերծեալ ի յետ փախեալ:
Բանակն ամէն Շահին եղեալ,
եւ աւարաւ բազում լըցեալ:
ձըղալ-օղլին մազապուրճ լեալ,
հազիւ գերծեալ յԱմիթ անկեալ:
375 Անդ ամօթոյն զինքն ըսպանեալ,
փոխան զօրդին իւր կացուցեալ:
Հինգերորդին Միւր Ազգին լեալ,
ի ձիգիրու երկրէն ելեալ:
Միւր Շարաֆին եղբայր մի լեալ,
380 որ յեղբօրէն ասլըստամբեալ:
Անթիւ գօրօք զօրապնդեալ,
եւ աշխարհի աւեր ածեալ:
Նախ զՀասնքէֆ նա աւերեալ,
եւ զՅամետին յոտն կոխեալ:
385 ԶՏօրայ երկիրըն թալանեալ,
մինչեւ Մծբին բընաջինջ լեալ:
Եւ ըզձիգիր յոյժ աւերեալ,
մինչ ի Պօհտանն նա խարխարեալ:
Եւ ի Սըղերթ քաղաք մըտեալ,
390 շուրջանակի զնա պաշարեալ:
Զիշխանս նորա անդէն սպանեալ,
եւ ըզքաղաքն առեալ նըստեալ:
Եւ ըզԿուրտլան յոյժ աւերեալ,
եւ զՎրաղկան գերի տարեալ:
395 Եւ ի Քըֆրայ նորա սկըսեալ,
մինչ ի Թրկալըն թալանեալ:
Եւ ըզՄատան նա կողոպտեալ,
մինչ ի Շիրվան աւեր ածեալ:

Եւ ի Տէրգին չէն չըթողեալ,
400 զԱզու քաղաքն ահացուցեալ:
Եւ Միւր Շարաֆըն զայս լըեալ,
յոյժ տըրտմութեամբ եղեւ լըցեալ:
Շատ ընդ նմա պատերազմեալ,
երբեք չեղեւ ըզնա յաղթեալ:
405 Ապա ըզնա առ ինքն կոչեալ,
եւ ընդ նմա սէր հաստատեալ:
Յորժամ եղեւն առանձնացեալ,
Միւր Շարաֆին ըզնա խեխտեալ:
Նաեւ ըզգօրսըն կոտորեալ,
410 որպէս փոշի սիւրտ եղեալ:
Եւ Միւր Ազգին այսպէս կորեալ,
եւ չար մահուամբ յերկրէ բարձեալ:
Զառհաւատչեայն աստէն առեալ,
զյաւիտենին անդ է պահեալ:
415 Եւ որք սըմին նըման եղեալ,
սոյն սարասիւ բընաջնջեալ:
Իսկ վեցերորդ Քուրտ Ալին լեալ,
ի Սառանու երկրէն ելեալ:
Ուր եւ կային ասլըստամբեալ,
420 մեծաւ սիրով առ ինքն կոչեալ:
Այսպէս անթիւ գօրըս կազմեալ,
արիւնարբուք ամէնն լեալ:
Կրկին անգամ յԱրֆայ եկեալ,
զամենեսանըն կողոպտեալ:
425 Ի Սառանու մինչ ի Մուսուլ,
եւ ըզՇահրաղուշ աւերեալ:
Ամիթայ փաշայն զօրս գումարեալ,
եկեալ ընդ նմա պատերազմեալ:
Եւ յաղթեւ զնա ոչ կարացեալ,
430 այլ ինքն նկուս ի յետ դարձեալ:
Նա զօրացեալ եւ քաջացեալ,
եւ ի Պաղատան զիմաւորեալ:
Բազում աւուրս զնա պաշարեալ,
եւ ըզըրջակայն կողոպտեալ:
435 Բայց ըզքաղաքն չեղեւ առեալ,
զի էր անթիւ գօրօք լըցեալ:
Այլ յետ ի Միջագետս դարձեալ,
եւ զԱսորիս աւեր ածեալ:
Դեռ եւս ինչ գործ նորա չարեալ,
440 զի ի միջոյ եղեւ բարձեալ:
Եւ այլ բազում վատ մարդ ելեալ,
եւ աւերիչ աշխարհի լեալ:
Զի ի միմեանց ելով ուսեալ,
յայսպիսի շար գործս սովորեալ:
445 Այս ամենայն շարս որ գըրեալ,
ի մեր մեղացըն գործեցեալ:

427 յԱմիթայ:

